

– Հրաման է իշխանիս,– ըսաւ Գրիգոր եւ խոնարհաբար ողջունելով երբ դուրս պիտի ելնէր՝ սպասաւոր մը ներս մտաւ ձեռքը թուղթ մը եւ ըսաւ.

– Տեր, պատգամաւոր սուրհանդակ մը Կամսարականաց Ներսէի իշխանի կողմէն հասաւ, այս թուղթը կը բերէ Ձեր տէրութեան:

Մուշեղ առաւ թուղթը կնճռոտ եւ զբաղած երեսով, ձեռքով նշանացի իմացուց Գրիգորի, որ կրնայ երթալ, եւ նա ելաւ դուրս, բայց բնականաբար շատ հետաքրքիր էր իւր քեռուոյն պատգամաւորը տեսնելու եւ իւր մօր ընտանեաց վրայ տեղեկութիւն ամենը, վասնզի մորմէն յուսահատած՝ խօսքն անգամ կը վախեր ընելու. մանաւանդ որ հօրեղբայրը կը տեսնէր յայտնի թէ իւր մահուան ինչչա՛փ արեւի կուզէր հաւատալ քան կենդանութեան: Սակայն դանդաղիլ այս ապարանից մէջ խելք չէր, ուստի ելաւ դուրս եւ հարցուց զգազրիկ. իսկ սա զինք տեսնելուն՝ խորհրդաւոր կերպարանք առած մօտեցաւ եւ կամաց ձայնով «Երթանք, իշխանիկս, քեզ բաներ ունիմ պատմելու»,– ըսաւ: Եւ երբ պալատէն քաղաք կ'իջնէին, սկսաւ Գազրիկ իւր պատմութիւնը.

– Նախ պետք է զրուցեմ թէ քու հօրեղբայրդ՝ եթէ ծառայից հարցնես՝ շատ... ընդունելի մարդ չէ: Որովհետեւ նոքա այնպէս կը պատմեն թէ շատ սուտ եւ խարդախ է: «Անպիտան, կ'ըսէր մէկը միւսին, գնացիր Բռնաշէն չորս ամիս տունդ պառկեցար, ետքը մէջտեղ ելար թէ Արաբաց երկիրը գնացի իշխանին եղբօր որդին փնտրելու համար, մեռեր ու թաղուէր է ըսիր երդումով, եւ ահա ամէն տեղ ձայն կը տարածուի, որ Գրիգոր եւ քեռին Սուրեն՝ երկուքն էլ ողջ եւ կենդանի ազատեր Հայաստան կ'ուզան: Այդ մարդիկն այնչափ տարի քու խաբէութեամբդ չարչարուէր են, եւ քու սուտ երդմանց համար Կամսարական իշխանին խնդրակները ետ դարձան ու նոցայ փրկանաց դիները ետ տարին»:

– Լաւ, այս ի՞նչ կը նշանակէ, Գազրիկ,– այն միայն որ հօրեղբայրս խարդախ ծառայ մը ունի եղեր, որ զինք խաբէր է:

– Բայց դու պատմութիւնն ամբողջ մտիկ ըրէ՝ վերջը դատէ: Այդ ծառան առաջ համբերեց, կատակի տեղ առաւ այդ խօսքը. յետոյ երբ մէկ քանին վրայ ինկան եւ սկսան զինք նախատել՝ «Ես իմ գլխես այս բանը չի հնարեցի, եղբարք, մեծ իշխանին հրամանաւ եւ խրատով չարժեցայ», ըսաւ: Այն ժամուն ես կարծեցի թէ ամենքը պիտի լռեն, բայց ահա մէկն ելաւ, «Իշխանը այդպիսի բաներ հնարելու շատ վարպետ է, ըսաւ, այս ամառ, երբ իրեն լուր տուին Ամդայ թէ արաբը կ'ուզայ՝ ձայն չի հանեց, չիմանալ կեղծեց. երբ Տարօն մտնելու եղած՝ հազիւ թէ գեղերու ձայն տուաւ, որ ամբանան, շատ մարդ ոտքի տակ գնաց, ինքն էլ սուտ